



ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ

Հունվարի 5-ին, շաբաթ.—ԾՐԱԳԱԼՈՅՑ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱ-
ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌԻՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

«Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ ատուր յայտնեցաւ.

Հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան ատեոխս աշխարհի.

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի»:

Արքազան շարականագրի՝ Մովսէս Խորենացու այս գեղեցիկ շարակա-
նով համայն մարդկությանը խորհրդավոր հանդիսությամբ ավետում է մեր
Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ ծննդյան ավետիսը:

Դարեր շարունակ հայ հավատավոր ժողովուրդը, մեր Փրկչի Ա. Ծնընդ-
յան և Աստվածահայտնության տոնին եկել է Ա. Էջմիածին՝ հաղորդակից
դառնալու արքազան արարողություններին, ամրապնդելու իր քրիստոնեա-
կան հավատքը և ստանալու հոգեկան ցնծություն և ուրախություն:

Այս տարի ևս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ շու-
քով ու հանդիսավորությամբ տոնեց Քրիստոսի հրաշափառ Ծնունդը:

Առաջին անգամ այն իսկապէս դարձավ համաժողովրդական, համապե-
տական տոն:

Օրվա մեծ տոնի առթիվ, ժամը 17-ին, Մայր տաճարում տեղի ունեցավ
«Ծաշու» և «Երեկոյան» ժամերգություններ:

Եկեղեցական հանդիսավոր թափորով Մայր տաճար առաջնորդվեց Վե-
հափառ Հայրապետը:

Սկսվեց Ծրագալույցի ս. պատարագը: Ավագ ս. սեղանի վրա հոգեպա-
րար ս. պատարագ էր մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող
գերաշնորհ Տ. Ծահե արքեպս. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ բովան-
դակալից քարոզ խոսեց (Տես էջ 68):

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ
կատարվեց Ա. Ծննդյան նախատոնակի կարգը:

Նախատոնակից հետո Նորին Սրբությանը, «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» և «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականների երգեցողությամբ, եկեղեցական թափորով առաջնորդում են Վեհարան, ուր Մայր Աթոռի միաբանությունը Հայոց Հայրապետին շնորհավորում է Ս. Ծննդյան մեծ տոնի առթիվ:

*

* * *

Հունվարի 6-ին, կիրակի.—ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր տաճարում տոնական ժամերգությունից հետո, ժամը 11-ին, սկսվում է հանդիսավոր ս. պատարագը:

Մեր Փրկչի հրաշափառ Ծննդյան և Աստվածահայտնության մեծ տոնի առթիվ, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերազնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսպալյանը:

Բազմաթիվ ուխտավորներ և հավատացյալներ են եկել Մայր տաճար՝ մասնակցելու ս. պատարագի արարողությանը և մեկ անգամ ևս լսելու քերկրալի ավետիսը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Ավագ ս. սեղանի առաջ, ատյանում ս. պատարագին ներկա են Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, Նախարարների խորհրդի նախագահ տիար Վազգեն Մանուկյանը և պաշտոնատար այլ անձինք:

Առաջին անգամ ս. պատարագը Երևանի հեռուստատեսությամբ, ուղիղ եթերով, սփռվում է մեր հանրապետության ողջ տարածքում:

«Հայր մեր»-ից առաջ արտառուչ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով բովանդակ հայությանը ի Հայաստան և ի Սփյուռու աշխարհի Նոր տարվա և Ս. Ծննդյան տոնը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է ջրօրհնյաց հանդիսավոր արարողությունը, որը խորհրդանշում է հիշատակը Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով Հիսուս Քրիստոսի մկրտությունը Հորդանան գետում:

Ապա Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր օրվա մեծ տոնի առիթով Նորին Սրբության կողմից տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայրավանքի պաշտոնեությունը:

Ծաշկերույթին հրավիրված էին Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, նախարարների խորհրդի նախագահ Տիար Վազգեն Մանուկյանը և հայրենի իշխանության այլ պաշտոնյաներ:

Վեհափառ Հայրապետին, Հանրապետության նախագահին և ներկաներին Ս. Ծննդյան տոնի առիթով շնորհավորական խոսք է ասում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Գերազնորհ Տ. Ծահե արքեպս. Աճեմյանը:

Սրբազան հոր բովանդակալից խոսքից հետո, Նորին Սրբությանը և ներկաներին ջերմ շնորհավորանքի ու բարեմաղթանքների խոսք է ասում

Հանրապետության Խորհրդարանի նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ
ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Վեհափառ Տեր, ես կրկին ուզում եմ շնորհավորել Ձեզ Հայաստանի իշխանությունների անունից այս հանդիսավոր օրվա առթիվ: Այսօր բոլորս էլ ականատես եղանք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը իսկապես դարձավ համապետական, համաժողովրդական տոն: Այսօր այդ տոնին մասնակցեց երեք ու կես միլիոն մարդ, որովհետև պատարագը սփռվում էր հեռուստատեսությամբ, և ամբողջ հանրապետությունը մասնակից դարձավ պատարագին: Տպավորությունը ցնցող էր, իսկապես զգացվում էր, որ տոնը համաժողովրդական է, համապետական: Եվ սա պատահական չէ, որովհետև հայրենի նոր իշխանությունները իսկապես ազգային իշխանություններ են: Սրանով է, որ մենք տարբերվում ենք նախորդ իշխանություններից: Նախորդ իշխանությունները վատ չէին, դավաճաններ չէին, պարզապես նրանք ազգային չէին, ծառայում էին օտարին: Այդպես էր բախտ վիճակվել: Այսօրվա մեր իշխանությունների էությունը ազգային բովանդակությունն է, և դրա իմաստավորումն է մեր վերադարձը դեպի մեր ազգային արմատները, մեր ազգային ավանդությունները: Այս գործընթացի մեջ ոչ մի կերպ չէր կարող անտեսվել եկեղեցին, և պետությունը համապատասխան վերաբերմունք է ցուցաբերում եկեղեցու նկատմամբ: Մեր ազգային ավանդների մեջ, ինձ թվում է, ամենամեծ տեղը պատկանում է եկեղեցուն, որովհետև եկեղեցին մեր ազգային միակ հաստատությունն է, որ մեզ կապում է մեր անցյալի հետ, մեր հազարամյա անցյալի հետ: Ուրիշ ոչ մի հաստատություն չունենք այդպիսի, մենք ոչ նախարարություն ունենք, ոչ թագավորություն, նույնիսկ արվեստը, մեր այսօրվա արվեստը, գրականությունը, անցյալի հետ կապ չունեն դժբախտաբար, անգամ լեզուն: Միակ հաստատությունը, որ մեզ կապում է հազարամյակների հետ, եկեղեցին է, և դրա համար մենք պետք է այս հաստատությունը փայփայենք, պահպանենք աչքի լույսի պես: Բացի այս ազգային վեհ բովանդակությունից, մենք եկեղեցու մեջ տեսնում ենք նաև գործնական մի հաստատություն, հաստատություն, որը պետք է ամբողջությամբ նվիրվի մեր ժողովրդի բարոյական մաքրմանը:

Այսօր դժբախտաբար կյանքը շատ ծանր է, մարմինը ծանրաբեռնված է բազմաթիվ հոգսերով, առօրյա մտատանջություններով, այսօր հոգին է, որ պետք է փրկի այդ մարմինը: Մարմնի պահանջները բավարարել անմիջապես դժվար գործ է բոլոր իշխանությունների համար: Այս ճանապարհին ամենակարևորը հոգով զորացումն է: Իսկ հոգով զորացման մեջ եկեղեցուն չափազանց մեծ դեր է վերապահված:

Ես, մեկ անգամ ևս շնորհավորում եմ անձամբ Ձեզ, Վեհափառ Տեր, բոլոր ներկաներին, Սուրբ Ծննդյան առթիվ, ցանկանում Ձեզ քաջառողջություն, արևշատություն և մեր եկեղեցուն՝ շենություն»:

Ճաշկերույթի ավարտին Վեհափառ Հայրապետը ուրախ սրտով և ջերմ սիրով իր օրհնությունն ու պատգամն է հղում բոլոր ներկաներին:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ
ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ԾԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ**

Ես նախ շնորհակալություն պիտի հայտնեմ բոլորին բարեմաղթանքների համար: Մի խոսք էլ ե՛ս ուղղեմ մեր սեղանակիցներին, հատկապես մեր կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներին, որոնք ինչպես մեր Մայր տաճարում, այնպես էլ այստեղ ներկա են: Այսօր այս սեղանի շուրջ սովորաբար ներկա են մեր հոգևորականները, միաբանները մեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները և մի քանի պաշտոնյաներ:

Սովորաբար մենք այսպես համեստ սեղանի շուրջ հավաքվում ենք Ս. Ծննդյան կամ Զատիկական տոների առիթով:

Այսօր առաջին անգամն է, որ նման առիթով, այս 35 տարիների ընթացքում, մեր պետության վերին իշխանության պաշտոնատարները ունենք իբրև սեղանակից:

Մենք գնահատում ենք, փառաբանում ենք, նույնիսկ, մեր ինքնիշխանության, անկախության Հռչակագիրը բազում ձևերով, և՛ դուրս և՛ մենք: Բայց երևի տակավին լրիվ կերպով չենք ընկալել, չենք ըմբռնել պատմական նշանակությունը այս հռչակումի, որովհետև տարիներից ի վեր մենք մոռացել էինք ինքնիշխանության մասին նույնիսկ մտածել, տակավին Կիլիկյան թագավորությունից հետո՝ մոտ 600 տարի: Անկախ նրանից թե հետ այսու ինչ կացություններ կարող են ստեղծվիլ՝ նպաստավոր կամ աննպաստ, այն, ինչ որ կատարվել է՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ կմնա իբրև հուշարձան՝ այսօրվա և վաղվա և ամբողջ հայոց պատմության ճանապարհի վրա: Այս նշմարտությունը մենք հետզհետե ավելի լավ պիտի հասկանանք:

Որպեսզի արտահայտեմ իմ հուզումն այսօր, մի պարագա ուզում եմ պատմել իմ հիշողությունից: 35 տարի է այս Աթոռի վրա եմ գտնվում: Թե՛ այստեղ՝ Հայաստանում, թե՛ արտասահմանում, տարբեր-տարբեր առիթներով, բազմահազար ողջունի, մաղթանքի խոսքեր եմ լսել, բայց մեկ անգամ և միայն մեկ անգամ, լսեցի անսպասելի մի մաղթանք: Սա պատահեց 1956 թ. Եգիպտոսում՝ Ալեքսանդրիայում, երբ իմ առաջին ուղևորության շրջանն էր: Այնտեղ տեղափոխված էր Ռումինիայից, հայտնի ընտանիքից՝ Թոփալյան Ներսեսը: Ինձ լավ ճանաչում էր անշուշտ Ռումինիայից: Ալեքսանդրիայում նա ինձ դիմավորեց ուրախությամբ, բաժանման պահին հուզվեց, և ինձ ասաց՝ «Վեհափառ Զեզի կմաղթեմ երկար տարիներ, որպեսզի ըլլաք ազատ Հայաստանի կաթողիկոս»: Լսելով այդ մաղթանքը ես թե՛ ուրախացա և թե՛ տխրեցի, վստահ լինելով, որ ես չեմ հասնի այդ օրերին:

Եվ ահա Աստուծո կամքով ես հոգեկան այդ մխիթարությունը ապրում եմ այժմ, որ Հայաստանի նոր պետականության հռչակումով հասա այդ պահը ապրելու: Ինչպես զգում եք բոլորդ, ի՛մ խոսքերով և քարոզներով, և կոնհակներով փորձում եմ մեր ժողովրդին հասցնել ազատության ավետիսը և հիմնավորել այն, մաղթելով, որ Աստված մեզ հեռու պահե նոր փորձություններից, եղածները հերիք են արդեն: Տերը մեր հայրենի կառավարության բարձր ղեկավարությանն ուժ ու եռանդ թող պարգևի և լավատեսության ոգի,

որպեսզի այս փոխանցման շրջանը կարողանա անցնել խաղաղությամբ և հասնենք բոլորիս երազանքների իրականացման՝ ամրապնդելով Մեր ինքնիշխան անկախ պետությունը, քաղաքական անվտանգությունը և տնտեսական բարօրությունը: Այս մաղթանքով իմ բաժակս բարձրացնում եմ և իմ օրհնությունն եմ ներկայացնում՝ մեր ժողովրդին, մեր հայրենի պետության ու բարձրաստիճան պատասխանատու, հայրենաշեն ղեկավարներին:

Մեծահարգ տիարք նախագահներ ու նախարարներ՝ Ձեզ մեր օրհնությունը:

